


Հ Ա Ս Յ Է
Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE



ՊՈՑԵՆՆԵՐ

ԵՂԻՊՏՈՍ
Յարկան՝ դո. ողջ 30
ԱՐՏԱՍՄԱՆ
Յարկան՝ ֆրանկ 10

Բաժանորդ ՅԱԻԵԼՈՒԾ ԳԵՐՈՒ ՓՈՍՏԱՐԷԿ ՎՃԱՐԱԿԷ՛ ԳԵՐԺ ԱՅԻՔ ԸԼԼԱՆԸ .

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չի՛նք տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր տնայնագրութեամբ :

Ազգեսանդրոյ Երեւանացուցիչ
Յ. Պ. ՏՈՒՐՈՒՆԵԱՆ
Ռադիկալ Բաշա Թ. 67

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն , Գ Ր Ա Կ Ա Ն , Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ր Ե Ր Թ

Թի՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքալիս խնդրոց հարաւարտեալ պիտի յիշուի ներքալիս հասցեով թերթիս Մասախարաւի, որ է՛

ՊԵՏԻՔՇԱՐԹԻ

ԿԸ ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղարկելու պահանջատեղիքը եւ իրենց գրածները

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂՋ

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

Առաջիկայ Կաթողիկոսական ընտրութիւնը ժամանակէ մը ի վեր մտքերը կ'զբաղեցնէր, և իրաւամբ պիտի զբաղեցնէ ալ :

Ազգային զանազան շրջանակներու մէջ տիրող այս իրարանցումը ներքին կը գտնենք : Ունենալ Կաթողիկոս մը՝ այնպիսի առաւելութիւններով օժտուած՝ որ ազգին ընդհանրական ցաւը, վիշտը, իրենը նկատելով՝ առիթը ներկայացած ատեն, դարձան մը ընէ այդ ցաւերուն : Առ անշուշտ պիտի գտնուի կաթողիկոսը մը որ այդ բարեմասնութիւնները իր վրայ կրէ : Տարակուսիչ չէնք ուզեր թէ Իզմիրլեան Սրբազան աննոյճէ մէկը պիտի ըլլայ :

Գահիրէի և Ազգ. քանդակի Երեսփոխանները, մանաւանդ Ազգ. քանդակի յանձնարարները՝ մէկ քարով երկու ճնճըղկ զարկին . նախ՝ Կաթողիկոսական ընտրութեան այժմեութիւնները առիթ մը եղան, որ իրենց ընտրութիւններուն հանդէպ հաւանական եղող ներկայ և առաջիկայ դժուարութիւնները ընդմիջտ հարթուին, և երկրորդ՝ մերժելու ժըլատութիւնը ունեցան Վսեմ . Պողոս և Բարթող Բաշաներու և ուրիշ ի բացակայութեան ձայն կամ քուէ զրկող Երեսփոխաններու քուէներն կամ ձայները : Այսպէսով կը կարծեմ թէ՛ քիչ մ'ալ հին ու մին խնդիրներու հաշտոյն վրէժ լուծած եղան մեծատուն երեսփոխաններէն :

Քաւ լիցի թէ՛ քուէներով ընտրուած՝ միջոցները կարեւորութիւն չունին հիմայ՝ Երեսփոխաններու կատարած գործողութիւնները ինձի համար առարկելի ըլլան : Ես կուզեմ ընդունիլ միշտ՝ որ Ազգային իշխանութիւնը ներկայացնող անձերու իրաւասութեանց մէջ ստորնդութիւններ չըլլան, և միւս կողմանէ՛ Ազգային իշխանութեան ղեկավարներն ալ՝ փոխադարձաբար արդար ըլլան՝ հանդէպ իրենց համայնքը կազմող անհատներէն ամենէն յետինին անգամ :

Եթէ վերոյիշեալ երկու նկատողութիւններն ալ կրնեմ, պար-

զապէս իմ վրայ մնացած տպաւորութիւնը թարգմանել կուզեմ այս էջերուն մէջ և կը յուսամ թէ՛ ո՛չ մին ո՛չ միւսը պիտի ցաւեցուցած ըլլամ : Միայն թէ՛ փոփոքելի չէր որ երկրորդ պարագան՝ վրիժառութիւնը՝ Իզմիրլեան Սրբազանի կաթողիկոսացման պատեհութեանը մէջ տեղի ունենար :

Գահիրէի Իզմիրլեան Սրբազանի անունին կրթիւնով վճլլուկ մը ինկած է սա՛ մեր լսարան՝ ընթերցարանին մէջը դուրսը պատկոյններէն մէկ քանիններուն մէջ : Գործի վրայ են : Իզմիրլեան Սրբազանը կաթողիկոս պիտի ընտրեն . կարեւոր գործ է չէ՛ մի : Որովհետեւ ԻՐՆՆԻՔ, միայն ԻՐՆՆԻՔ կրնան ընտրել :

Պիտի ինդրէինք այդ մէկ քանի պարուններէն և մանաւանդ՝ Գահիրէի ատենապետ ըլլալիքէն՝ որ այդչափ շատ չի քրտնին : Եթէ Իզմիրլեան Սրբազանը իրենց շանքերով կաթողիկոս պիտի ըլլայ և իրենց երախտապարտ պիտի մնայ, ոչպէս զի անոր անունը շահագործեն այս ու այն դէպքին կամ պարագային մէջ, այն ատեն պէտք պիտի ըլլայ թելադրել Իզմիրլեան Սրբազանին որ իր անձեռնմխելի արժանապատուութեանը ինայելու համար արգելէր այդ վճլլուկները, սպառնալով որ հակառակ պարագային պիտի մերժէ կաթողիկոս ընտրուի :

Իզմիրլեան Սրբազան թերևս այդ վճլլուկներէն պահիկ մը սիրաշահուած, առանց մտէն ճանշնալու իր մարդիկը, զեղեցիկ մտածումներ մը ունենայ . սակայն պիտի սխալի :

Օր մը երկու երեք հոգիներու մէջ, այդ պարուններէն մէկը հպարտութեամբ մը Իզմիրլեան Սրբազանի մէկ նամակը կը կարդար ինձի :

Ենորհակալեաց նամակ մ'էր . Գահիրէէն զրկուած 1000 ֆրանկի նուէրի մը համար :

Իզմիրլեան Սրբազան մեծ սխալով մը « Հաճընի կորիւնը » անուանած էր մեր այդ « զիտպիտի զօրավար » իր նամակին մէջ :

Նորին Ամենապատուութիւնը բնականաբար չէր գիտեր այդ նուիրատուութեան ինչպէս զրկուելու

բոլոր մանրամասնութիւնները . . . ու այդ ձեռնհասութիւնը վերադարձ էր իր Հաճընի կորիւնը . . .

Գրեթէ նմանօրինակ պարագաներու մէջ կը գտնուինք հիմայ՝ ալ, ու մեր պարունները գործի մէջ երեւալու համար Երեսփոխան ժողովի մը որոշումը բեկանելու չափ յաւակնոտ մտածումներ կուենան :

Ո՛րչափ կը սխալին այս միամիտները, երբ կը կարծեն թէ՛ 5-10000 և աւելի հայերէն 3-400 հարիւրէն՝ յօշոյս յօճառլան ալ միայն առնելով՝ գումարուած միթիւնկի մը ուժովն է որ Երեսփոխանութիւնը Իզմիրլեանը Կաթողիկոս ընտրել կուզէ և Պ. Մինաս Չերազն ալ պատգամաւոր :

Ե՛րբ պիտի ազատինք այս ցուցամոլութիւններէն : Պարուններ . միանգամ ընդ միշտ հասկցէք թէ՛ Երեսփոխանութիւնը լոկ իբր ձեւակաւութիւն կընդունի ձեր միթիւնկները և ո՛չ ուրիշ բան : Նմանութիւն չըլլայ, այդ կարգի միթիւնկները իսկապէս վարպետ որսորդներու քով թաղակի դերը կատարելէ տարբերը շանակութիւն մը չունին :

Եթէ միթիւնկ գումարել և վճլլուկ հանելը գիտէք, հասկցէք նաև թէ՛ Երեսփոխանութիւնը մեր իսկ լիազօր ներկայացուցիչներն են և պէտք է որ նախ ձեզմէ յարգուին իրեն որոշումները, մանաւանդ երբ հաւասարապէս ամենուն ալ յարգանքը վայելող անձի մը շուրջ կը դառնայ ինդիրը :

Օրինապահ ըլլանք քիչ մը : Մենք անիշխանականներ չենք : Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՀԱՅԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԴՉ. ՄԻՈՒԹԻՒՆ

Ստացանք Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան Երկրորդ տարւոյ ՏԵՂԵԿԱԳԻՐՆ, Գահիրէի Կամպէթթա տպարանէն լոյս տեսած :

Յաջորդ թիւերով պիտի խօսինք սոյն ամենակարեւոր ընկերութեան մասին :

ՅՈՒԼԻՍ ՏԱՄՆԵԻՉՈՐՍԸ

1789 էն ի վեր՝ այս օրը՝ Յրանսացիք ընտրած են իրենց ազգային ամենամեծ տօնը : Որ կը կատարեն անհուն խանդավառութեամբ, մեծազոր ցոյցերով, երբեմն ալ արիւնալի ընդհարումներով :

Սոյն օրը՝ ինձ հետ աշխատող ֆրանսացի երիտասարդի մը հարցուցի թէ՛ « Ի՞նչու չէք տօնը ձեր ազգային այս մեծ ու պերճաշուք օրը : » Մինչ անիկայ մաղձոտ արտասանութեամբ մը ըսաւ ինձ .

« Ի՞նչ սրտով կրնամ պերճ ու վսեմ օր մը ճանչնալ այս օրը, որ անվերջ անալի արիւնահեղութեանց, դժոխային վատութիւններու, խայտառակ ուճիւններու շարունակութեանց սկզբնաւորութիւնը եղաւ : »

Երիտասարդին այս խօսքերէն տըպաւորուած, պահ մը՝ կարճ եւ խուզարկու թափառուած մը կընեմ այս անհունացած դէպքերուն վրայ, Եւ իրօք չէ՞ք ֆրանսացիները, այդ սեւ օրերուն մէջ ի՞նչ ամենջանքներ, եւ ի՞նչ սարսափներ անցուցիք են :

1789 էն մինչեւ Թէր իւրաքանչիւր օրը մէկ մէկ անուշի տառապանքներու թատերավայրը դարձած էր ֆրանսացի, իր այդ ժամանակուան հասցուցած մարդիկը կարծես այդ դէպքերուն համար ծընած էին : Ահա փողոցի մը մէջ մէկը կը բարձրանայ, քիչ մը շարժուած քանի մը կրակոտ բառ, հազարաւոր միամիտներ իրեն կը հետեւին, ուր որ կը ցանկար ան : Բարեգիտ ամեն փողոցները կը վրտային այս տեսակ հոտորներով, Ետտեղ միմիանց հակասող զազափարներ արտայայտելով, տեղի կուտային սարսափելի կոտորածներու . . .

Եւ այդ հինգ սոսկալի տարիներու մէջ Կիլոթիւնները անգաղտն ու արագ կը շտապէին, իւրաքանչիւրին մէկ մէկ մարդկային գլուխներ թոցնելով :

Մարա, Տանզոն, Պրիւնովիքի, Գարիէ, Բոպէսիէր, սոսնք իբր ազատութեան ախոյեաններ, ազգային փրկութեան իմաստուն ռահվիրաներ, բռնակալութեան անհաշտ հակառակորդներ կը ներկայանային :

Առանց սակայն ունենալու, գաղափարի վճիտ պայծառութիւնը, սրտի գիրագոյն ազնուութիւնը, անոնք արգէն իրենց գործունէութեան մէջ մէկ մէկ արիւնաբերու բռնակալներ էին, Բարի ազնիւ թաղաւոր մը, թագուհի մը սպաննելէ յետոյ, տասնամեայ քընքուշ անմեղուկ աղէկ մը, չարաչար տանջանք սպաննելը՝ յիզափոխութիւն չէ՛ երբէք, Կիներ, ծերեր, անմեղներ յօշոտելը, գազանային արարքէ վեր բան մէ :

Վերոյիշեալ այս անձերուն պէս զեւ շատեր կային, որոնք ժողովուրդը զպսելու նպատակաւ բերաւոր կեանքեր խորտակեցին: Գարիէ, մի-միայն տանկերու հազար անմեղներ զոհուելու պատճառ դարձաւ: Անհամար մարդիկ իր ներկայութեանը՝ խեղդամաս ընել կուտար Սէն դեաին մէջ: Եւ վայրենորեն ձեռնարկով, «Հանրապետական հարսանիք» կը կոչէր, երբ անոնք ջրամոյն կրկնային, Բորբորէր եւ Տանգոն հազարաւոր Ժրոնտեաններ, ժողովրդաններ զլխատել սուրին:

Անմեղ մէք Լուի Թագաւորը, եւ չափազանց մարդասէր, իր միակ փափաքն էր իր ժողովուրդին հաճելի եւ օգտակար դառնալ: Սիրայօժար եւ անկեղծ բազմաթիւ շնորհեց սահմանադրութիւնը: Ուր աւաճ, իր այդ չափազանց մեղմամբութիւնն եւ հեղու-թիւնն էր, որ Ֆրանսայի զլխուն այդ-քան մեծ աղէտքներ հասցուց:

Երբ խուժանը պայտօր պաշարած «Ի մաս» կաղաղակէր, ըրբոտ մը կտրտար, ահա թագաւոր մը որ կնոջ նման կը ծածուկ, Լուի 14-րդ անմեղապէս անոր վրայ կը խոյանայ իրեն ըստ պատնացող զէնքերը արհամարհելով, եւ անոր ձեռք ուժգին բռնելով զէպ ի իր կուրծքը կը տանի զոչելով, «Թըշուա՛ն» տե՛ս թէ կուրծքս երկիւղեւ կը տրոփե՛, Եւ մինչեւ զլիստաման բե-մը աներկիւղ յատնացաւ: Մինչդեռ անհիշուելի, անկեղծ, երկաթէ Բոպէս-բիէրը չուղարձ գետեղեցին կիսթիւնին սակ...:

Ու այս մեծահոնձար արեւնար-բունները, հետզհետէ իրարու հանդէպ թշնամանալով, ու անպատակ ամբո-խին զօրութիւնը ձեռք ձեռք խելուն հետեւանք եղաւ ամենուն ալ կիսթիւ-նի շնորհաւորութիւնը...:

Իրենց յաջորդները չունեցան թէ-եւ նախորդներուն հզօր կարողութիւնը, սակայն այնպէս անհիշուելի-ցին արեւնոտ գործունէութիւնը: Այս-քան արեւն թափուեցաւ, ստանց ո՛ր եւ է յաջող եղբակացութեան յանգելու: Եւ պատճառը...:

Պատճառը, որովհետեւ անոնք ճշմարտեւ մե մարտը յեղափոխութիւն մը ստեղծելու, ժողովուրդին ազատու-թիւնը եւ խողաղութիւնը ապահովե-լու, վսեմ ու աննուած կամքն ու թաղ-ձանքը չունեցան երբէք. այլ ջանացին զոհուած հազարաւոր անմեղներուն զի-սակացը վրայ իրենց փառքը շինել, սոսկ զիկատատրներ դառնալ: Մինչդեռ արտաքին թշնամիները, Ֆրանսայի այս անիշխանական ու ջլատուած վիճակը պատեհ տոթի սեպելով, անոր վրայ յարձակելու, զայն վերջացնելու շար-ժուճներ սկսան:

Իսպառ պիտի կորուզէր Ֆրանսան անխուսափելիորեն, սակայն այն մի-ջոցին կը հասնէր սուրբ երիտասարդ մը ճշմարտ հանձար, որ նորածագ արեւու նման Ֆրանսայի սիրամած սրտին վը-րայ կը ծագէր. անոր տաղանդէն եւ հայեացքին ահաւորութեան հանդէպ ինկան կործանեցան, մշտապես խոռ-վութեանց խարխուլ մնացորդները: Ժողովուրդը անխաբը, զրկեց զինքը զորովանօք, եւ զայն իր հայրը ընա-րեց:

Մինչդեռ ան՝ իր արծուային աչ-քերը զարցուց զէպի Ֆրանսայի հորի-զանը, տեսա՛ւ, այո՛ տեսա՛ւ, այն մը-թիւն եւ մրկայոյց ամպերը որոնք Ֆը-րանսայի կեանքին կապտանային, վե-հապանծօրէն բարձրացուց ստպետական զորքը, եւ անոր սակ խոնուած մարտը եւ նորահաս բազմութիւնը սրտաց: «Յառա՛ջ»:

Մինչդեռ Ֆրանսայի կորուստը փութացնող եւ պատրաստող զայնակից պետութեանց հսկայ բանակներ, հե-տզհետէ կիշար կը ջախջախուէր, ա-նոր խորիտ ոտքերուն տակ: Եւ ամ-բողջ աշխարհ զարմանքի հիացուածով

համոզուած, անոր փայլուն յաղթա-նակներուն, եւ քաջութեանց զիւրազ-նեղութիւնը կը մրմնջէր սարսաղին: Եւ այդ Մեծ հանձարն էր նախու՛ծն Պոնաբարդ:

ՍԵՆ ԳԱԼԵՄԱՆ

ԹԱԽԻԾՆԵՐ

Տարագնացիկ անուղջները՝ ցանկալի Թախտիւրիներ կուսակաւ հոգուս զոչանար Գալիսիանոյ սրբաւ յուշի զեղ աշի Ենաւ սիրոյն ու ին երգի կ յըջահաւ...

Ճաւաճեցիկ կ վարկաններս կեանքի մեջ Օտորուով եւ կրպակով մ'ըրկալար Ու առօրին կոյս շողեռն հեռ անջեջ կուզեմ խոխալ, յո՛ւն յոյգերով անխաւար...

Բեկոյ՛ յայտնեց զոյգ մը կարմիր խնամուն Երանդուս մեջ արքայնէս շատ կանու չաւրքոյնեկով ոչոյղիս անխաւար Հաւրոյնեկով ոչոյղիս անխաւար Բայց երազ եր անու՛շ, աւա՛յ արտաբոյս...

Տարագնացիկ անուղջներս յոգնալի Տակցանաւուն ցուրտ սարսաղներս ոճրաբազն Կուցե զարմաւ մ'ըրկալար շոյին անկալի Ա'ն շողեռե՛ր շոյ սուր ինձի շոյն աշտուն...

ԱՏԱՎՄ

ՎԱՐԴԸ

Որչափ ըլլաւ դու զուարթ Չե՛ս ըզգար սարսաղի մարդ Որքան զարուս զայ անցնի, Չե՛ս այդ Մայիս Հայրենի:

Որչափ ճաւաղոյ զայ սանի՝ Չե՛ս զուկան կեանքիս՝ մանի, Որքան ըրիկ եղի՛ք հեզ բարի, Չե՛ս մի կանցնի մի անխաւար սարի:

Որչափ ցուր շիտու ե, Չե՛ս որ մի կեանք մաշտու ե, Որչափ սանկան սիրտ հնու Չե՛ս որ այնչափ արիւն անդու:

Որքան ես կարոս այսպեւ, Չե՛ս որ հեռու Հայրենիքս, Որքան հեծեմ ես ու յաւ, Չե՛ս երբաւ ես բողոք սաւ:

Որո՛ն Աստուծոյ, Հայր՛ուն, Չե՛ս, Չե՛ս, այլ վայուն, Ա'ն եւ կը մեղմիտ սարսաղի մարդ Չե՛ս. ես յունիս զարդ...:

այ վարդ ՇԱՀԷՆ

Տեյուր 21 Մարտ 908

ՕՍՍԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հեռագիրը Յուլիս 24 ի երեկոյին լուր բերաւ մեզի կայսերական իրատէի մը մասին: Իրատէ՛ որ «կը հրամայէ Երախոխանաց ժողովի մը գումարումը, եւ որով ընտրութեանց համար հրաման-ներ կը արուին»:

Վայրկենական սպաւորութեան ներքեւ տեսակ մը կարծես կանխապատ-րաստուած ժողովուրդ ցոյցեր սկսան հոս ու հոն: Այլազան սարսաղանութիւն-ներ երկտրական հոսանքի մը պէս շըր-ջան ըրին քիչ մը ամէն կողմ ու զրա-կուած իրանդավառութիւն մը զրաւեց ամենուն սրտերը:

Այս ճնշարկի հետքերն այ-լապէս օրուս մը ունենալու վրայ մը-տածողներ ալ եղան. թոռցիկներ ճամ-բայ հանուեցան, ու լուրին թողած վաղանցիկ սպաւորութիւնը սկսած սասկուութեան վրայ տեւակաւութիւն չունեցաւ: Վստահութեւն չ'կար:

Սկեպտիկները անկարեւոր թիւ մը չէին կազմեր այդ ամէն ետուզեռին մէջ, ու երկու օր բուսական եղաւ եղ-րակացութիւն մը հանելու այդ շլմո-րեցնող իրարանցումներէն: Իրա՛ւ է. պէ՛տք է հաւատալ կը հարցընէին իրարու: Եւ արգարեւ այս հարցումները ընելու շատ մը պատճառ-ներ ալ զոյգութիւն ունէին: Իր տեսա-կին մէջ առաջինը չէր այս:

Ինչ փոփոխութիւն կարող էր մտցնել 1876 ին հաստատուած Օսմ. Սահմանադրութիւնը մեր հայերուս ար-զի վիճակին վրայ, եւ ի՞նչ կը պակ-

սեցնէր կայսերական միակետական իշխանութեան գորութեանէն: Բացար-ձակապէս ոչինչ, Հեռագնեէ կը քննենք: Օսմ. Սահմանադրութիւնը հաս-տատուէին ի վեր գործուած անարդա-րութիւնները մեզմէ՛ ո՛չ ոքին անծա-նօթ են: Թող մեր մէջէն յանդուզն մէկը շնորհաու կայսեր եւ զինքը չըջապատողներուն երթայ հարցնել թէ ի՞նչ ուղղութեամբ կատարուած ենք ց'արդ. ու պատասխան պիտի տանք որ «Սահմանադրապէս եւ արգարու-թեամբ...»:

Ուրե՛մ, ամենակատարեալ վե-րապահութիւններով պէ՛տք է ընդունել այս իրատեաններն ու հետադիւրները, ու-րոնք սակայն՝ մեր մէջէն ստիճէն օղ-տուել զիտցողներուն համար պակիկ գրամագրութիւն մը պիտի ըլլայ անորոյ ժամանակ մը. իսկ իրակաւութեան մէջ նոր ծուղակ կ'ըլլայ չ'պիտի զարդի կը կարծենք՝ սոյն ազատասու-նչ իրատեան:

Իրոնական փորձերը տեսնել ըս-պատելու իսկ հարկ չ'կայ: Սակայն ե-թէ կուզէք, շարձ մը միայն պիտի բաւէ մեր ըսածը հաստատելու կամ հերքելու համար:

Իրատեստե Վե՛տի. ու՛ր ի մէջ այ-լոց «Մամուլ ազատութիւն» ալ շնոր-հած է:

Մեր կաթողիկոսական ընտրու-թեան կարեւոր հարցի մասին մինչեւ ց'արդ Պօլտոյ թերթներուն մէջ լուս մը իսկ գրուած չէ. բնականօրոյ գրա-քննիչին դրած արգելքին պատճառաւ: Առաջիկայ թղթարկով եղած թեր-թերուն մէջ ուշի ուշով փնտնեցէք թէ այդ մասին իրաւոյնէ բան մը գրուած կա՞ն: Եթէ կայ, համարչի փաստերէն մէկը առիկայ թո՛ղ ըլլայ:

Իսկ 1876 ին հաստատուած Օսմ. Սահմանադրութեան ինչ ըլլալը գիտ-նալու համար, որովհետեւ տպագրուած գիրք մը չունինք ձեռքի սակ, զիւն-ցէ՛ք 1902 ի «Արշալոյս» ին 243, 4, 5, 6, 7, 8 9, 250, եւ 51 թիւերուն, ուր ար-տագրուած է վերաբերեալ Օսմ. Սահ-մանադրութիւնը իր ամբողջութեամբը:

Ի՞նչ մը աւելի լաւատես ըլլալու համար նոյն իսկ, պէ՛տք է ժամանակ մը սպասել, Սահմանադրութեան գոր-ծադրութիւնը տեսնել ու գործադրու-թեան եղանակէն հետեցնել թէ՛ մեզ հայերուս համար ի՞նչ չափով օգտակար կրնայ ըլլալ այն, այդ ատենն է որ ցոյցերու պիտի կրնանք մասնակցիլ, ու եթէ ուրիշներ ալ կազմակերպած չըլլան այդպիսի խնդրապատր ցոյցեր, մեր կողմէ ուղղակի միեւնոյն ցոյցերը պատրաստելով ու լախանալ: Դրական մարդ ըլլալնիս ստով կրնանք ապա-ցուցանել:

Երեւակայութիւններու ետեւէն շատ վաղեցիներ: Բաւական է:

ՇԱՄԱՆԴԱԴ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Չենք կարող ըսել թէ՛ ամուսնա-կան խնդիրներու քանի՛ք երորդն է. որ այս անգամ Առաջնորդարանի կանանց սեղանին վրայ դրուած է: Նոր հարց մը ահա, որ սակէ առաջ զատարանի վճարողով մը ազատ թողուած հայ ե-րիտասարդին կը վերաբերի եւ որոյ մասին մեր նախորդ թուով քանի մը տողեր նուիրած էինք, մեզի այդ մա-սին կանխաւ տրուած լուրերուն միա-կողմանի եւ խնդրութեամբ հանգամանք մը ունենալն ալ պարզելով այնտեղ:

Այսպէս վարուեցանք՝ մեզմէ՛ ըս-պատուած ուղղամտութեան պատուէր-ներուն համակերպելով: Սակայն զբժ-բաղք ենք խոստովանելու որ՝ մեր ուղ-ղամտութիւնը, ճշմարտասիրութիւնը, եւ այդ երկու գերազանց բարեմաս-նութեանց համապատասխանելու համար մեր ըրած հետապոտութիւնները, զո-հարեութիւնները ու ջանքերը կաս-կածի սակ ձգելու համար, զանազան ՍՈՒՏ սարսաղանութիւններ հրապարակ գրուած են: Այսինքն մենք այդ ճըշ-մարտութիւն միայն պարունակող տո-ղերը վճարուելով գրած ենք եղեր... շանքս ըրած ենք եղեր, Թողունք որ նոյն իսկ ըստ օրինի վճարուելու իրա-ւունքն ալ ունեցած ըլլալինք...:

Մենք հայկական բարոյականի ար-զի ինչալու վրայ եղող աշտարակէն մեծ ու պզտիկ քարի կտոր մը գտնէ մեզի հասնել կարելի կը նկատէինք:

Իսկ այդ կարգի տարածանութիւններ հնարողներուն բոլոր ներքին յոռի միա-քերը մեզի ծանօթ են կը պոսանք հի-մայ:

Եթէ մեզմ ձայնով ըսինք ու հաս-կընալ չուզուեցաւ, այժմ «կը պոսանք» կ'ըսենք. պիտի հասկնանք արդեօք...:

Այդ լիտի տարածանութիւնները հրապարակ զնորներուն կը հարցնենք ուրեմն. — Պարոնի՛ր, ուրի՛շ՝ վճարուել ստացած էինք առաջին անգամ, երբ այնչափ խիստ բաներով մեղապրեցինք երիտասարդ մը՝ որ իսկապէս իր իրա-ւունքներն ալ ունի եղեր. ինչպէս վճարողը կը հաստատէ եւ ինչպէս պի-տի երեւայ աղբարին չըջանակի մէջ կատարուած քննութիւններէն, եթէ լըջութեամբ եւ ձեռնաստօրէն կատարուել այն, եւ կողմնակալութիւններէ՛ բոլո-րովին գերծ ըլլայ:

— Իտրձեալ. Պարոնի՛ր. կը լը-սենք թէ՛ այդ ամուսնական խնդրոյն ստիճէ. կուսակցութեան պատկանող քանի մը անհամարու ստորագրութիւն-ներով — ստորագրութիւններ՝ որոնց ալ բերը քան տարեկանի մը բաւ է ա-մուսնական կեանքէ ու անոր սրբու-թեանն եւ ոչինչ չ'հակացողներ են — հանրապիր մը մատուցուած է Առաջ-նորդարանին ինչպատե աղկաւ կողմին... ու այս՝ գործի վրայ երեւալու հա-մար անշուշտ: Ըօ՛ք. խնդրե՛նք, Պարոնի՛ր, ի՞նչ շանքս ըրին ատոնք ընկերվարաբար՝ երիտասարդին տարա՛ն սեռ հակառակորդներէն... կրնա՞ք ը-սել: Իայց եթէ զուք չընէք՝ մենք ձեզ մէ լաւ գիտենք...:

Եւ այդ հանրազիրը ստորագրող-ներէն մէկ քանիններն ալ մեզի անձամբ յայտարարեցին թէ՛ խաբուեր են, եւ ըս-տորագրութիւններն ետ պիտի առնեն... իսկ եթէ չ'առնեն, եւ եթէ զանազան նաշխանելով իրենց այդ մասին ունեցած տղխութիւնը սակաւին ցուցադրելու ժամին, այն ատեն մենք աւելի յսակ խօսելու պէտքը կ'զգանք յանուն ար-դարութեան եւ յանուն հայ հանրու-թեան բարոյականին:

Հիմակու հիմայ պիտի սպասենք որ Առաջնորդարանը խորապէս քննէ այդ խնդիրը, եթէ ձեռնհաս է, ու ա-նոր կարծիքն ալ ստանանք. անէ՛ք վեր-ջըն է որ մենք պիտի խօսինք թէ ի՞նչ անցած ու դարձած է այդ խնդրոյն շուրջը, եւ թէ ի՞նչ կը նշանակեն տրուած հանրագրութիւնը եւ ստորագ-րութիւնները եւ ի՞նչ արմէք ունին մեր մասին մէկ քանիններու հրապա-րակ հանած տարածանութիւնները:

ՄՐՏԱՆԱԿ

Կիմանանք թէ՛ Լօզանի Ուշի Թա-ղի վարժարանի հայ աշակերտ մետա-սանամեայ Գրիգոր Թումանեանը վաղ-քի մրցման մէջ ալ առաջին մրցանակի արժանացած է:

Իրիգոր Թումանեան անդրանիկ որդին է Պ. Օ. Թումանեանի:

ՎԵՐԱԴԱՐՁ

Առամնարոյժ Տր. Ա. Գըլըճ, որ երկու ամիսէ իվիր Եւրոպա կը գտնը-ւէր, անցեալ շաբթու վերադարձած է եւ ըստ առաջնութեան իր յաճախորդները կ'ընդունի:

Ա.ՉԳ. ՎԱՐՃԱՐԱՆ

Գալստեան Ազգ. Վարժարանի Տը-նօրէն Տրար Գ. Թուրեան, որուն հրա-ժարականը ետ առնելը ծանուցուեցաւ այս էջերուն մէջ. այս օրեր վերջնապէս հրատարկելով վերստին՝ կալիպթա կը մեկնի:

Ե. ՏԵՄԻՐՃԻՊՈՇԵԱՆ

Պօլտոյ թերթերն կը տեղեկանանք թէ հանրապետութիւնը — բանաստեղծ Եղիա՝ Տէմիրճիպաշեան — Երկրամայի երկրպագուն — վերջ տուած է իր կեան-քին:

Տէմիրճիպաշեան արդէն շատ տա-րիներ առաջ ըսած էր. «այս կեանքը սպիրիտ չ'արժեր»:

Ա.ՉԳ.

Գաւառական Պատկ. Ընդհ. Ժու-լովոյ որոշմամբ, յառաջիկայ դըպ-րոցական շրջանին, որ կ'սկսի Սեպ-տեմբեր 1 ին, Գալստեան Ազգ. Վարժարանի աշակերտներէն ամ-սալթոչակ պիտի պահանջուի, Նա-խակրթարանի համար 40 եգ. զըշ. եւ Մանկապարտէղի համար 20 զըշ. Եւ Միջակ կարողութեան տեք ըն-տանեաց պատկանող աշակերտք մի-այն կէս ամսաթոյշակ պիտի վճա-րեն:

Իսկ ձրի պիտի ընդունուին այն տղաք որոնց ծնողքը Ազգ. Առաջնորդարանէն վաւերացեալ կարօտութեան վկայագիր մը ներկայացնեն :

Ուստի այն ամեն ծնողք որ իրենց զաւակները Գալստեան վարժարանը զրկել կը փախարին , Ոգոստոս 25 էն սկսեալ ամեն օր միջօրէէն առաջ , թող հաճին իրենց զաւակաց հետ վարժարան ներկայանալ , Սկստեմբերի ամսալուսնալը վճարելով զաւակներին արձանագրել տալու համար :

Իսկ կարօտութեան վկայագիր ստանալ փախարողք թող այժմէն դիմեն Առաջնորդարան , վասնզի առանց սոյն վկայագիրը ի ձեռին ունենալու որ եւ է տղայ իւր ձրի չպիտի ընդունուի վարժարան :

Ամսաթուղակները կանխիկ վճարելի են , ուստի ամսոյն մինչեւ 8 ը ամսաթուղակը չվճարող աշակերտը վարժարան չպիտի ընդունուի :

Գահիրէ 28 Յուլիս 908

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱՌԱՂԱՆ

Ողբացեալ Արփեար Արփեարեանը գնդակահարող Պետրոս Հիւսիսեան , բուն անունով Յովսէփ Ալիփուճարեան : Տիգրանակերտցի , որ Գահիրէի եղբունդատ ատենին կողմէ մահուան դատապարտուած էր , առաջիկայ չարած օր , Օգոստոս 1 (ն.ա.) կառավարչատան բանտին մէջ կախաղան պիտի բարձրանայ : Մայրքենք որ ասիկայ տգիտութեան զոհերուն վերջինը ըլլայ :

ՍՊՈՒՆԱԿԱՆ ՆԱՄՈՎ

Տեղական թերթերուն մէջ կը կարդանք :

Ամերիկայի հայ յեղափոխականներուն կողմէ Վ. Պոլոս բոշա նուպարի հասցէին Գահիրէի նամակատունը սպաննական նամակ մը ձգուած է , որով ն. վոնմութիւնը կը հրաւիրուի 50,000 ոսկի վճարել , հակառակ ճարադային տէրօրի պիտի ենթարկուի :

Լսած էինք որ օր 1905 ին 20, 000 ոսկի ուղած էին : Վսեմութենէն , հիմայ 50,000 ոսկիի բարձրացած է : Այս ասիտը իրացնէ որ շատ է . Յեղափոխականները ինչ աղտոտ վախառուներ են եղեր . . . :

ԿԱՏԱՐԱՆ

Երէկ Ապտինի գտտարանին մէջ ԼԵԻԱԻ Խմբագրապետին դէմ բացուած դատը կը տեսնուէր : Առաւօտէն մինչև երեկոյ մեծ բազմութիւն մը խնդումները կը գտտարանին դուրսը :

ՀԵՌԱԳԻՐ

— 0 —

Կ. Պոլիս 24 Յուլիս . - Կայտերական իրատէ մը կը հրամայէ երեսփոխաններու ժողովի մը գումարումը : Ընտրութեանց համար հրամաններ տրուեցան :

Կ. Պոլիս 24 Յուլիս - Երեսփոխան ժողովը 1876 ի կազմական կանոնադրին համաձայն պիտի կազմուի Մեծ եպարզօրը ըստ ամեն կողմ հեռագրեց :

Սպայակոյտին ընդհանուր պետանունուեցաւ Շաքիր Բաշա :

Կ. Պոլիս 25 Յուլիս . - Նախարարները երկար խորհրդակցութիւններէ յետոյ , Սահմանադրութեան

հաստատումին անհրաժեշտութիւնը զգացուցին :

Սուլթանը յուզումէն անհանգրստութիւն մը սենեցաւ :

Բազարական դատապարտեալները ընդհանուր ներման արժանացան :

Պէրլին 25 Յուլիս . - Սուլթանը իր դահլը Պիւրհանէտտին որդւոյն պիտի թողու :

Աթէնք 25 Յուլիս . - Գիւլիկ Սայիտ բաշա իրեն առաջարկուած Մեծ եպարզօրի պաշտօնը ընդունելու համար իբր պայման առաջարկած է սահմանադրական կառավարութեան հաստատումը :

Կ. Պոլիս 26 Յուլիս . - Երէկ ամբողջ քաղաքը հրաշագեղորէն լուսազարդուած և զբօշազարդուած էր ու մեծ խանդավառութիւն կը տրերէր : Ամեն ազգի և դասակարգի պատկանող մարդիկներէ բաղկացած բազմութիւն մը նուազներու և դրօշակներու ընկերակցութեամբ Բ. դուռը ներկայացաւ շնորհակալեաց ուղերձներ մատուցանելու համար : Թէվֆիգ Բաշա յանուն Սուլթանին փոխադարձ շնորհակալեց յայտնեց :

Կ. Պոլիս 26 Յուլիս . - Մամուլի ներկայացուցիչները շնորհակալեաց ուղերձ մը մատուցին Սուլթանին :

ԻՆՉԵՐԻ՞ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ

ՄԵՐ ԱՁԻԱՅԻՆ ՓՐԿԻՉՆԵՐԸ

ԹՈՒՆԱՒՈՐՄԱՆ ՄԻ ՀՐԷՏՍՅԱՆ ՓՈՐՁ

(Շար. 497-25, 26, 27, 28 նախ . թիւերէն)

Նոյն օրը, նոյնմբերի 4 ին, ժողովից ցրուելիս, նրանք ինձ առաջարկեցին մնալ ճաշին իրանք մօտ եւ վայելել իրանց պատրաստելիք խորովածը : Ես արտուր էի, ներողութիւն խնդրելով քայլերս ուղղեցի դէպի իմ բնակարանը որ գտնուում էր կէս ժամ հեռուութեան վրայ :

Տանտիրուհին, որ մի վերին աստիճանի բարի անդուհի էր, Սագունու դէպքից յետոյ, ամէն օր սրտատուրի ըստ պատու էր իմ վերադառնիլն Երբ որոշեալ ժամից քիչ ուշանում էի, նա մեղմօրէն կշարժուում էր ինձ և խնդրում ժամանակին տուն վերադառնալ եւ մանաւանդ մի առժամանակ ման չգալ փողոցներում :

Տուն հասաւ Տիրութիւնս տանրիւրուս, ու ըստ զրուեց, Տիրացեց պատճառը : Ես ինքս էլ չգիտէի Որքան ճշմուռ, աշխատում էի ուրախանալ, դէթ ուրախ ձեւանալ չէր յաջողում : Հոգեկան անբացատրելի թախիծս փարատելու համար, մտնեցայ « օրգին » եւ սկսեցի նազել « Կոռուկ » ը :

Ճաշից նոր էի վեր կացել, երբ ներս մտաւ Տաշիրեանը :

Ժամերով խօսեցանք Սագունու սերօրիտից, անգլիական ոստիկանութիւնից, Կենտրոնից, մեր բարձրից, եւ այլն : Մեր ուղեղը անընդունակ էր դարձել ուրիշ խնդիրների վրայ կանգ առնելու : Յանկարծ, քամու նման շքնչասօզոտ, ներս մտաւ վարդ Աղասեանը :

Նոր եղբ' ուն' Գուրս նետուցինք :

Ժամը Յից անց էր արդէն, Հակառակ Լօնդոնի սովորական մտայն կղանակին, այդ օրը արեւի զգուշ ճառագայթները դուրս էին կանչել, ինչպէս Լօնդոնի քաղաքացիներին նոյնպէս եւ մեր պատգամաւորներին՝ զբօսնելու Բեֆհամ րիւ ի բազմամբոխ մայթերի

վրայ : Բաւական երկար ման գալուց յետոյ, մեր ծը պատգամաւորները վերադառնում են Կենտրոն :

Ամենից առաջ թեւեւեւ գնում են Անրիմանը, որ անցեալ տարի Բազում ամառգործէն սպանեց, եւ Հ. Արզումանեանը, 15 քայլ հեռուութեան վրայ, Համրը, Որսորդը եւ Ռուբէն Կարապետեանը՝ կողք կողքի, նրանց ետեւից նոյնպէս 10 - 15 քայլ հեռու՝ Եփրեմ Կաճարեանը, Պետրոս Գալֆասեանը եւ Վարազդատը :

Հաջիւ Կենտրոնին 150 քայլ մնացած, հէնց նոյն փողոցի յայտնի արձանագործի արեւստանոցի առաջ՝ ահագին բազմութեան մէջ, յաջորդաբար արաքում են 4 հարուածներ :

Ընկնում է Համրը, ընկնում է Որսորդը ըստէպէս, Աղասեան է միայն Ռուբէնը :

Առաջին եւ վերջին խմբակների տղերքը վրայ են տալիս Հասարակութիւնը շնորհած, հեռանում է դէս ու դէն : Տերօրիտար մի ակնթարթում նետում է իրան արձանագործի արեւստանոցի բակը, նստում մի քարի վրայ եւ հինգերորդ հարածը հասցնում իրան . . . :

Ձէ՛ ընկնում . . . Մէջքից դուրս է քաշում պահեստի թիփովէրը, ուղղում շեշտակի ճակատին եւ թաւալում գետին :

Կաճարեանը իսկոյն ճանաչում է անօրինակ ոճրագործին եւ բացականչում :

— Թիրեաքեանն է :

Մենք Տաշիրեանի հետ հեւ ի հեւ հասանք նոյն ըստէին, Հասաւ եւ ստիկանութիւնը, Երեք դիակները փոխադրեցին հիւանդանոց :

Տերօրիտար զբպանից ելաւ մի յունական անցապիր, եւ մի փոքր թուղթ, որի վրայ գրուած էր հրկուբառ « սարը » (դեղին) եւ սեւ . . . :

Այդ երկու նշաններն է միայն, որ առաջնորդել էին տերօրիտար բազուկը « Սարըն » Հ. Արզումանեանէն էր, Կենտրոնի անդուր եւ Սագունու գործակից, իսկ սեւը, ըստ երեւոյթին Ռ. Կարապետեանը, որ Կենտրոնի գործակալն էր՝ Սեւ ծովի շրջանում, այն շրջանում ուր սպանել էին Միսօն եւ Չիթճիեանը :

Բայց մի եղբրական զուգարկուածեմը Որսորդը նոյնքան զեղնագոյն էր, եւ Համրը նոյնքան սեւադոյն : Եւ բազդի չարաչուք հեղուածեմը տապալում էին հենց այն ընկերները, որոնք ամենից աւելի ուժգնօրէն բողոքել եւ դատապարտել էին ինչպէս Միսօ Չիթճիեանի, նոյնպէս եւ առհասարակ կուսակցական բոլոր սպանութիւնները :

Իսկ այդ տերօրիտարի, թէ առաջին Սագունու՝ եւ թէ վերջին սպանութիւնները զեկավարել էր մեր հին ծանօթ խորհրդաւոր « սուսանդը » « սիրելի » Հրանդը որ հերոսացել ու անմահացել էր բոլոր պատգամաւորների թունաւորման հռչակաւոր փորձով . . . :

Մեր երկու ընկերների այդ ողբերգական վախճանը սարսափելի տպաւորութիւն թողեց մեր՝ պատգամաւորների՝ վրայ, ո՛չ ոք մեզինց ապահով չէր, թէ ինքը մի ժամ յետոյ գոյութիւն կունենա՞յ : Մենք գտնուում էինք դժոխային պայմաններին, հրէշային դաւերի մէջ, Բեֆհամ րիւ ի գաղտնի ոստիկանութեան էնսպեկտօր Պ. Էսաւարտ վատաքօք օրը մի քանի անգամ այցելելով մեզ, խորհուրդ էր տալիս փողոց դուրս չգալ, հաւատացնելով, որ տերօրիտարի չարքը վերջացած չէ :

Այս վերջին ոճրագործութիւնը սակայն, ոստիկանութեան մէջ կասկած յարուցեց դէպի մեզ, մանաւանդ որ Սագունու սպանումից յետոյ Լօնդոնի թերթերից մէկում մի անամօթ ու պփփայի լուր պաււեց, ի հարկէ Արզուման խմբակի կողմից թխած, որ Հընչակեան պատգամաւորները իրար կոտորում են, որ Սագունին սպանել է հէնց իր ընկերների ձեռքով :

(Շարունակելի)

ՍԵՂԱՆՍԻՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

— 0 —

Մուսի փողոց րիւ 6, Սիւնկրի մասնաճիւղին ֆով, Ժիւսքերի դիմաց :

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի Ֆօնսիէի հին եւ նոր, Բումէլիի երկաթուղեաց եւ Բանամայի Ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի :

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գներէն կրնան օգտուել Եփրատաբնակ մեր ազգայինները մեզի դիմելով :

Մասնավճարներով - 25, 50, 100 - կարելի է արձեթղթերու տիրանալ, եւ մասնաւոր պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կ'ընել :

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, եւ առեւտրական ամեն կարգի Պոսթալ գեղջիւլու պատրաստակաւութիւն :

Սեղանաւորական եւ Պօստայի գործառնութիւններ եւ այս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին :

Բումէլիի երկաթուղեոյ վիճակահանութեանց պանդ Օթթօմանէն երաշխաւորեալ եւ վաւերացեալ քրօնկանէն գնել ուղղներուն համար՝ լաւ պատահութիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ պանդ Օթթօմանէն ուղղակի կատանաք յիշեալ քրօնկանէն : 12-50

ԱՐՄԵՆԱԿ ԹՍԵՃԵԱՆ

ՕՐԹԷԼ ՏՐԱՊԵՉՈՆ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ

Բանթօ, Սուպուլ Մանկաի Մանկաի Մզկիթին դէմը 3 թիւ 3

Պանդոկապետ - Մ. Գէորգեան

— 0 —

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Գրմեցէք անդամ մը և գոհ պիտի մնաք :

Գրմեցէք չափաւոր են . 28-55

ԽՕՍՈՒՇՈՒՏՈՒՔ

ԳԸՐՈՆԻԿ ՇԱՏ ՊԱՏԻԿ

Ժամանակէ մը ի վեր մէկ քանիներու ներքին կենցաղը կը սերտանի : Բայց հանրութեան օգտակար ծառայութիւն մատուցանելու համար ամեն տեսակ զոհողութիւն յանձնուելու է , ասոնք սահմանափակելով սակայն դրամի և ժամանակի մէջ :

Երկար փորձերէ յետոյ, գիւսս ըրած էի Մի ճառագայթներու միջոցաւ : Այս հրաշալի գործիքն ալ՝ դժբաղդաբար՝ շատ անգամ իր վաստը կած համբախին համապատասխանող ծառայութիւն չ'մատուցաներ եղեր . . . :

Վերջապէս զիւստ ըրած էի . միայն կը մնար թէ ինչ բառերով և ինչ ոճով աշխարհին հաղորդէի զայն , պատուանշաններու շարք մը խլելու համար սրկէ նրկէ : Հաջար անգամ գրիչս մեկնիլն մէջ թալթխեցի ու երկու տող բան չ'կրցայ գրել ըրած գիւտիս նկատմամբ . . . :

Այս մտահօգութիւններուն մէջ թաղուած՝ անիծելով գրիչս ալ, կազմարն ալ , ու այն ամենը՝ որնք իմ գրուածս լոյս աշխարհ գնելու պիտի ծառայէին , տունէն դուրս նետուեցայ , ու շիտակ սրճարան մը գացի , ուր՝ թէև տէրը պէտպէրի լրագիր հրատարակողներէն է ,

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՄԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱՎԶ - ԷԼ - ՊԻՐԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԵՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու ամանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճախութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

սակայն Բիւզանդ Բէշեանին համար կիրններուն այցելութենէն չ'զրկուելու համար, Բիւզանդեան Բիւզանդիոնին Բիւզանդական հարկը կը վճարէ՝ տարին տասներկու ամիս ինձի պէս նեղօրտ յոճախորդները զբաղեցնելու համար . . .

Հիմայ տարակոյս չունիք թէ Բիւզանդիոն կարգալը եղաւ բարկութեանս ու անէծքիս հետեանքը, և հետեանքալ աղամանդաշինութեան պատմութիւնը երբ աչքիս հանդիպեցաւ, բառ առ բառ օրինակեցի: Կիրնութիւն մը՝ որուն շնորհիւ իմ սերտողութեան գրած ճեմքը յիշեցնէր ուս նկարագիրը բացատրած կրնամ ըլլալ, և այս առանց կարեոր յօդուութիւն մը կրելու .

ՄԵՐՍԷՏԷՍ

Ուզողը թող վրան առնէ . . .
Առակաց 17 գրուի 26 համար . . .

ԹԷ ԻՆՉ ՊԵՏԻ Է ԿԵՂԾ ԱԴԱՄԱՆԻ ԾԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

« Հիմայ ձրիապէս Ձեզի պիտի հաղորդեմ թէ ի՞նչ կերպով կարելի է աղանակ կամ ուկի պատրաստել .

Առէ՛ք .

Ա. Հաւոյ մը .

Բ. Միամիտ մէկը կամ միամիտներ Գ. 1, 600, 000 Փրանք .

Դ. Օտար երկիր գացող կառախուժ մը .

Երէ՛ք .

Ա. Միամիտ մարդն հալոցին մէջ կամ ուրիշ խօսքով, հալոցին մէջը փակեցէք զանիկայ .

Բ. Ապահով սեղ մը զրէք 1, 600, 000 Փրանք .

Գ. Ձեր և ոստիկանութեան միջև մեծ հեռաւորութիւն մը պահեցէք .

Դ. Երկու ձեռքերնիդ ծայր ծայրի, հովանոցի ձեռքով քթերնուդ ծայրը բռնեցէք .

Տարբարանական լիզուով այս բանաձեւն է .

Միամտութիւն, կվե՛ր՝ Շահամուութիւն, կվե՛ր՝ խարդախութիւն. հաւասար աղանակ . . . կամ ուկի . . .

Ասիկայ գիտնականապէս ճիշդ գրութիւն մ'է, ու սոսր վրայ ընդարձակ յիշատակագիր մը պիտի մատուցանեմ անբարեխոհներու Ակադեմիային .

Բայց պէտք չէ այս գրութիւնը չարաչար գործածել. որովհետեւ թէև անիկայ գաւաթ մը ջուր կուլ տալու պէս գիւրբին կերելի, բայց ամենուն գործը չէ. արտակարգ ճարպիկութիւն և ձեռքի այնպիսի շուտութիւն կը պահանջէ որ ամեն մարդ չ'կրնար ընել .

Ընթերցողներուս ծառայութիւն մը մատուցանելու գիտումով, աւելի գիւրբին բայց քիչ մը աւելի սուղ միջոց մը պիտի սորվեցնեմ . Ի՞նչ կարեւորութիւն ունի սակայն ըլլալիք ծախսը, քանի որ ետքը անոր հարեւրապատկը շահ պիտի քաղուի .

Ահաւասիկ տարազը .

Կղճմտութիւն	— 0 կրամ
Անամոթութիւն	100 »
Էլիքսիտ անիբաւութիւն	50 »
Թիւրքիտ գողութիւն	500 »
Փախչելու փոշի	ըստ կամս

Եթէ այս տարազին համեմատ ալ չը կարենաք աղանակի պատրաստել, թե՛րեւս յաջողիք ուկի պատրաստել . . . կամ երկար ժամանակ քիտրան մնալ . Բայց ամենուն պիտեցած բանն է թէ հարուստեց պառնշներն են որ թիւրքան կերթան . Ձեզի կը հաւաստեմ թէ՛ հաղորդու մարդիկ կան որ իմ ցոյց աւելած վերջին տարազին համեմատ միայն աղամանի կը պատրաստեն . . . Միայն թէ անոնք համեմատ մարդիկ են եւ փոխանակ ինքզինքնուն գող ըսելու, գործի մարդ կանուանեն իրենք զիրենք .

Բնագրին յար և ևնան է
Ընդօրինակեց ՄԵՐՍԷՏԷՍ

ԱՉԻ

Հայ Յեղ. Հնչակեան կուսակցութեան Աղէքսանդրիոյ Մասնաճիւղին ի նպատակ սարքուած վիճակահանութիւնը տեղի ունեցաւ Յուլիս 5-ին կիրակի օր, կէս օրէ ետք՝ սեղոյս « ՏԻԴՐԱՆ ԵՐԿԱԹ » ընթերցարանին մէջ .

Շահող թիւերն են հետեւեալները .

Թիւ 91	Պատի ժամացոյց մը
» 32	Վեցհարուածեան մը
» 38	Գալուստ Արխանանի պատկեր մը
» 98	» » »
» 446	» » »
» 76	» » »
» 331	» » »
» 181	» » »
» 413	» » »
» 239	» » »

Մանօր .— Շահող թիւերը ունեցողները պարտին մինչևե յառաջիկայ Սեպտեմբերի վերջերը ներկայանալ վարչութեան, ստանալու համար իրենց վիճակուած առարկաները . Հակառակ պարագային, ներկայացողները իրաւունք չ'պիտի ունենան ոչինչ պահանջելու .

Հնչակեան կուսակցութիւն Աղէք. Մասն. Վարչութիւն (Կնիք)

Հասցէ Mr. Vahan Ohanessian
B. P. 163 (Poste Française)
(Egypte) ALEXANDRIE

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից


ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՍԱՆԱԾԻՒԴԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլերներն են ևւ ասոնցմէ մինչևե ցարդ 17, 000, 000 ծախուած է .

400 է աւելի վկայական ևւ միսայններով վարձատրուած, Երաշխատուած մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիւրքիական արուեստանակիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինկլերի յաճկանչիմ

Զրի դասեր և նորոգութիւններ, Սինկլեր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հրներու ևւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՆՈՐ

ՍԱՐԳԻՍ Ց . ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆոֆոկրաֆներու ևւ կազի վառարաններու .

Տասներկու տարին « Սինկլեր » Ընկերութեան քով մեքենայարգութեան զբաղելէ յետոյ, այժմ զինովաճառ Ձախարիա Գոնտանթիոնի քով պաշտօնեայ է գնչիքու ևւ մեքենայարգարման ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյն ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, ֆոֆոկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց ևւ յարգարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան զիմել իր տունը Պալը — Շէրիէի կողմը Շարա Պէղղալա՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, ևւ զարձեալ զիւրութեան համար քարթ քոստալով մը կրնան զիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը ևւ Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ ևւ փորձեր կատարուելէ յետոյ .

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառուէ .

19 — 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

Շարէ Մուհամմադ Ալիի ամբողջ գրծին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան ևւ մաքրութեան շնորհիւ մնալուն զիրք մը բռնած է տարիներէ ի վեր .

Նպարեղէններու վերաբերեալ աւելն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ զնոցներու համար, անթերի են սոյն վաճառատեղոյն մէջ .

Մեր յաճախորդները գո՛հ թողելու նպատակաւ՝ սպանելի ապրանքներու ընտրութեան ևւ գնումին ատեն շատ խնամք ևւ նոյն իսկ բոսխոսողութիւն կընենք . Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է ևւ մաքուր մեր քով .

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն առնած է . վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գո՛հ մնացած են .

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար զիմեցէ թ Պապ-Էլ-Խալէ՛ մեր վաճառատեղին ևւ չ'պիտի զղջաք .

16-41
ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍՍՐՃԵԱՆ